ԱՐԴ/0262/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հունիսի 2026 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԴ/0262/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 22-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2026 թվականի մարտի 24-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել Հայկ Արծվիի Գաբոյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ 62297625 (ԱՐԴ/0262/01/26) քրեական վարույթը:

1.1. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Հ.Մեխակյան) 2026 թվականի մարտի 26-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0262/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի հունիսի 5-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0262/01/26 քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Գ.Աբելյան) 2026 թվականի հունիսի 22-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0262/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունիսի 23-ին:

Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

4. Հայկ Արծվիի Գաբոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«(…) նա, «******* ****** *** * ******** *****» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գ.Ա.-ի 2023 թվականի հունվարի 3-ի թիվ *** հրամանով, 2023 թվականին հունվարի 3-ից մինչև 2023 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում և 2023 թվականի նոյեմբերի*

*9-ի թիվ *** հրամանով, 2023 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2024 թվականի մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում նշանակված լինելով հիշյալ ********** *********** կաթսայատան օպերատորի հաստիքում և նույն կազմակերպության ************** ********** Ա.Ս.-ի 2024 թվականի նոյեմբերի 8–ի թիվ **** հրամանով, 2024 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2025 թվականի մարտի 15-ն ընկած ժամանակահատվածում, նշանակված լինելով կաթսայատան հնոցապանի հաստիքում, խարդախությամբ՝ խաբեության եղանակով՝ իրականում գոյություն չունեցող փվյալներ հաղորդելով՝ աշխատանքի ներկայանալու և աշխատանքային պարտականությունները կատարելու վերաբերյալ, մեկ միասնական դիտավորությամբ, «******* ****** *** * ******** *****» պետական ոչ առևտրային կազմակերպությունից իր անվամբ ելքագրված ընդհանուր խոշոր չափի՝ 951.442 ՀՀ դրամ աշխատավարձի գումարները հափշտակել է: (...)»[1]:*

5. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2026 թվականի հունիսի 5-ի որոշման համաձայն՝ *«(...) Քրեական գործերի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայկ Արծվիի Գաբոյանին մեղսագրվել է խոշոր չափերով ենթադրաբար կատարված խարդախություն: Դատարանն արձանագրում է նաև, որ Հայկ Գաբոյանին վերագրվող ենթադրյալ արարքի փաստական նկարագրությունից պարզ չէ, թե այն որտեղ է ավարտվել: Այլ կերպ՝ հստակ չէ, թե «******* ****** *** * ******** *****» պետական ոչ առևտրային կազմակերպությունից Հայկ Գաբոյանի անվամբ ելքագրված ընդհանուր խոշոր չափի՝ 951.442 ՀՀ դրամ աշխատավարձի գումարները որտեղ են ենթադրաբար հափշտակվել:*

Վերոշարադրյալ պայմաններում Դատարանն արձանագրում է, որ նմանատիպ դեպքերի համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է հստակ կարգավորում՝ համաձայն որի՝ եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը, իսկ սույն քրեական գործով նախաքննությունը կատարվել է ՀՀ

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 3, թերթեր 170-171:

քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության կողմից, որը գտնվում է Երևան քաղաքում:

(…)

Այսպիսով, Դատարանը, հաշվի առնելով վերը նշված պատճառաբանությունը, Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները և ելնելով ընդդատության պահպանման վերը նշված պահանջներից ու պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, գտնում է, որ գործի հետագա քննությունը ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում անխուսափելիորեն կհանգեցնի մեղադրյալ Հայկ Արծվիի Գաբոյանի արդար դատական քննության հիմնարար իրավունքի խախտման, իսկ արդյունքում կայացված դատական ակտը ցանկացած դեպքում ենթակա կլինի բեկանման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ անհրաժեշտ է թիվ ԱՐԴ/0262/01/26 քրեական գործն ըստ ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[2]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունիսի 22-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…)*

*- մեղադրական եզրակացության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նախաքննության ժամանակ զննության է ենթարկվել մեղադրյալի բանկային գաղտնիք կազմող փվյալները, որոնցում տեղ են գտել մեղադրյալ Հայկ Արծվիի Գաբոյանին քննության համար հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածում փոխանցված աշխատավարձերի վերաբերյալ փվյալները: Ընդ որում՝ համաձայն հիշյալ քաղվածքի զննության փվյալների՝ վերջինիս անգամ՝ 2025 թվականի ապրիլի 4-ին, ******** *** * ******** *****-ի կողմից Հայկ Գաբոյանին որպես աշխատավարձ փոխանցվել է 57.000 ՀՀ դրամ, որը նրա հաշվից ելքագրվել է 2025 թվականի ապրիլի 10-ին, իսկ գործարքի նկարագրություն բաժնում որպես գործարքի կատարման հասցե նշված է Արմավիր:*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 25-27:

Նման պայմաններում՝ Դատարանը փաստում է, որ սույն դեպքում իր անհամաձայնությունն է արտահայտում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դիրքորոշմանը, որ սույն դեպքում հնարավոր չէ պարզել հանցանքի կատարման (այդ թվում ավարտման վայրը), քանի որ

*- հափշտակության ենթադրյալ առարկան դուրս է եկել ******* ****** *** * ******** ****** գույքային ֆոնդից՝ փոխանցվելով մեղադրյալի հաշվին,*

- մեղադրյալի հաշվի քաղվածքների համաձայն՝ վերջին կանխիկացումը կատարվել է հենց Արմավիրի մարզում:

*Տվյալ դեպքում՝ Դատարանի գնահատմամբ արարքի ավարտման պահ պետք է համարել «******** ****** *** * ******** *****» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքային ֆոնդից հիշյալ գումարները դուրս գալու պահը, երբ դրանք փոխանցվել են մեղադրյալի հաշվին, քանի որ այդ պահից սկսած մեղադրյալը ունեցել է դրանք տնօրինելու իրական հնարավորություն: Ավելին՝ եթե անգամ շարժվենք այն տրամաբանությամբ, որ արարքի ավարտման պահ պետք է դիտարկվի մեղադրյալի կողմից ոչ թե դրանք տնօրինելու իրական հնարավորություն ունենալու իրադրության ի հայտ գալու ժամանակահատվածի սկիզբը, այլ դրանք փաստացի տնօրինելու ժամանակահատվածը, ապա պետք է փաստել, որ փոխանցված վերջին ամսվա աշխատավարձը, որպես մեկ միասնական դիտավորությամբ շարունակվող հանցանքի բաղկացուցիչ մաս, կանխիկացվել է հենց Արմավիրի մարզում: Հետևաբար՝ սույն դեպքում, թեև ներկայացված մեղադրանքում նշված չէ արարքի ավարտման վայրը, սակայն մեղադրական եզրակացությամբ նշված փաստական տվյալի վերլուծությունն ակնհայտ է դարձնում, որ արարքի ավարտման վայրը հանդիսացել է Արմավիրի մարզը: Այլ կերպ՝ նման իրադրությունում կարևորվում է տուժողի գույքային ֆոնդից հիշյալ գումարները փոխանցվելու վայրը, իսկ սույն դեպքում տուժող է հանդիսացել «******* ******* *** * ******** *****» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը գտնվում ******** *******:*

(...)

*Անդրադառնալով նախաքննության կատարման վայրի ուժով սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելու հարցին՝ Դատարանը փաստում է սույն կանոնը կիրառելի է միայն այն պարագայում, երբ ենթադրյալ արարքի կատարման վայրը որոշակիացնելու բոլոր հնարավորությունները սպառված են, մինչդեռ սույն իրավիճակում նման իրադրությունը բացակայում է, քանի որ ենթադրյալ հափշտակության առարկան դուրս է եկել «****** ****** *** * ******** *****» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքային ֆոնդից՝ փոխանցվելով մեղադրյալին, իսկ վերջինս էլ այն վերջին անգամ կանխիկացրել էր հենց Արմավիրի մարզից:*

Այսպիսով, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի որոշումներում շարադրված վերլուծություններն ու դատողությունները, Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հետևաբար նաև հաշվի առնելով, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատությամբ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ուղարկվել է Դատարան, որպիսի պայմաններում կրկին քրեական վարույթի փոխանցումը ըստ ընդդատության հղի է քրեական վարույթի տարածքային ընդդատության վերաբերյալ վեճի կապակցությամբ կրկնակի շրջապտույտ ստեղծելու վտանգով, ուստի, Դատարանի գնահատմամբ, ստեղծված իրավիճակի հանգուցալուծումը կարող է տեղի ունենալ միայն վարույթի տարածքային ընդդատությունը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից լուծելով: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/0262/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 4, թերթեր 34-39:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[6]:

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(...)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը նաև ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ Հ.Գաբոյանին վերագրվող ենթադրյալ հանցավոր արարքի փաստական նկարագրությունից պարզ չէ, թե վերջինիս կողմից իր անվամբ ելքագրված աշխատավարձի գումարները որտեղ են հափշտակվել, գտել է, որ սույն

դեպքում կիրառելի է մեղադրանքի քննությունը՝ մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի գտնվելու վայրի դատարանի կողմից իրականացնելու վերաբերյալ կարգավորումը, և վարույթն ըստ տարածքային ընդդատության փոխանցել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան[7]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ սույն դեպքում հանցանքի ավարտման պահն է ********* ******* գտնվող՝ «******* ****** *** * ******** *****» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքային ֆոնդից աշխատավարձի գումարները դուրս գալու և մեղադրյալ Հ.Գաբոյանի հաշվին փոխանցելու պահը, քանի որ այդ պահից սկսած է վերջինս ունեցել դրանք տնօրինելու իրական հնարավորություն, ինչպես նաև այն, որ սույն դեպքում կարևորվում է տուժողի գույքային ֆոնդից հիշյալ գումարները փոխանցվելու վայրը, գտել է, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[8]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությանն առ այն, որ մեղադրյալ Հ.Գաբոյանը ենթադրյալ հափշտակության առարկա հանդիսացող խոշոր չափերի դրամը ենթադրաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ստացել այն պահից, երբ աշխատավարձի գումարն ******* ******* գտնվող «******* ****** *** * ******** *****» պետական ոչ առևտրային կազմակերպության գույքային ֆոնդից փոխանցվել է իր հաշվին: Վճռաբեկ դատարանի քրեական պալատը միաժամանակ գտնում է, որ մեղադրյալի կողմից վերոնշյալ գումարը հետագայում կանխիկացնելու կամ այլ կերպ տնօրինելու հանգամանքները չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ:

14. Վերոշարադրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/0262/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

15. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՐԴ/0262/01/26 վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայկ Արծվիի Գաբոյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ ԱՐԴ/0262/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ